Ստոյգ իրողութիւնն այս է. նախ՝ որ ընտրուեցին և ուղարկուեցին Մ. Աթոռի ժառանգ. դըպրոց ոչ թէ չորս, այլ՝ վեց երեխաներ. չորսը՝ Նիժից, իսկ երկուսն էլ Զոռլու թրքախօս Հայադաւան գիւղից։ Ահա նրանց անուանացուցակը և ընտրած պաշտօնավարութեան տեղերն ու պարապմունքները։ Նիժ աւանից՝ 1. Խաչատուր Ճոտանեանց, 2. Յովհաննէս Տ. Թովմասեան, 3. Վարդան Մարտիրոսեանց և 4. Յովսէփ Դաւթեանց, որոնք ս. Էջմիածնի օգն ու ջուրը չտանելու պատրուակով՝ կարճ ժամանակից յետոյ կիսատպռատ վերադարձան իրենց հայրենի գիւղը և սկսեցին պարապել երկրագործութեամբ—վարուցանքով մինչև ցարդ։ Զոռլուից՝ ուղարկուել էին Մելքիսեդէկ Խաչատրեան և Ղազարոս Յովսէփեան։ Նուաստիս յորդորմամբ և համոզմամբ յիշեալ ընկերս հաղիւ միայն ինձ հետ միասին մինչև մեր ուսման աւարտելը։ 1874 թ. Զոռլու և Միրզաբէկլու թրքախօս գիւղացիք համախօսական թղթով կամեցան քահ. ձեռնադրել տալ ինձ իրենց վրայ. բայց իմ ընկերոջ՝ Մելք. Խաչատր. ազգականներն ու խնամիները երկու գիւղերումն էլ յաղթանակը տարան, նրա քահ. դառնալու գործը յաջողեցրին, իսկ ես, որպէս հօրից զըրկուած որբ պատանի, միայի առանց տեղի և պաշտօնի։ Նուխի քաղաքի արհեստաւոր և միջակ դասը կամեցաւ քահ. ձեռնադրել տալ ինձ իրենց վրայ, բայց այստեղ էլ մի քանի ազդեցիկ բէկերն ու աղաները ինձ՝. իբրև գիւղականի զաւակի, արժան և յարմար չհամարեցին ինձպէս մի թերուսին